Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ U60832885 68

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
21	Հոկտեմբեր	2019 թ.		U	60832885 68
[4] Ստանդարտման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
21	Հոկտեմբեր	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (փոփոխություններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 9 4 0 7 9 8 8
[9] Անվանում	ԼՕՍՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՍՆ. ԴԻՍՊ. Փակ բաժնեհավաքական ընկերություն (ՓԲԸ)
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 9 4 0 7 9 8 8 7 1
[11] Բանկային տվյալներ	ՎՏԲ Հայաստան բանկ Կապան մՃ N 16022457801500
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ՍՅՈՒՆԻՔ ՄԱՐԶ, ԿԱՊԱՆ, Բաղրամյան 48
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՆՍԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԵՂԱՐՔԱՄԵՋ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գրագետոնական վարչություն N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՔԱԾՈՏՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ոչ միջոցով	Անուն, ազգանուն: Հայրանուն: Համար: Ամսաթիվ:

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծավալները)	Միավորի գինը	Ցենզ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Թիվ 4116091 9 քր. գործող դեղատոմսագրումական փոքրաբենություն	դեպք	1	32833		32833	20	6566.6	39399.6
Ընդամենը						32833	X	6566.6	39399.6

Դուրս գրող՝ ALAVERDYAN ANAHIT 6711590040
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոն մոտակայքում անուն, ազգանուն

պաշտոն մոտակայքում անուն, ազգանուն

21/10/2019 15:31:41

ՈՐՈՇՈՒՄ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

09.09.2019թ.

ք.Կապան

ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Հ.Մելիք-Քարամյանս, քննարկելով վարույթիս թիվ 41160919 քրեական գործի նյութերը

պ ա ր զ ե ց ի

2019թ. սեպտեմբերի 5-ին Կապան քաղաքի Հալիձոր թաղամասի 12/37 հասցեի բնակչուհի Մարուսյա Հմայակի Կոստանդյանը հաղորդում է տվել այն մասին որ իրեն անծանոթ երիտասարդը նույն օրը ժամը ժամը 11:30-ի սահմաններում, Կապան քաղաքի Ձորք թաղամասից դեպի Գ.Արզումանյան նրբանցքներ տանող կամրջի հարևանությամբ հափշտակել է իր կարմիր դրամապանակը, որի մեջ եղել է մոտ 96000 ՀՀ դրամ:

Հաղորդման վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Կապան քաղաքի բնակիչ Վրեժ Գրիգորյանը 2019թ. սեպտեմբերի 5-ին ժամը 11:30-ի սահմաններում, Կապան քաղաքի Ձորք թաղամասից դեպի Գ.Արզումանյան նրբանցքներ տանող կամրջի հարևանությամբ բացահայտ հափշտակել է իրեն անծանոթ կնոջ կարմիր դրամապանակը, որի մեջ եղել է մոտ 96700 ՀՀ դրամ:

Դեպքի առթիվ 2019թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ ոստիկանության Կապանի բաժնում հարուցվել է թիվ 41160919 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու նպատակով ուղարկվել է ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչություն:

05.09.2019թ.-Վրեժ Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին:

Որպես կասկածյալ հարցաքննության ժամանակ Վ.Գրիգորյանը տվել է ինքնախոստովանական ցուցմունք:

09.09.2019թ. <<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> ՓԲԸ-ից ստացված գրության համաձայն Վ.Գրիգորյանը դիսպանսերում հաշվառված է 13.08.2013թ-ից առ այսօր <<Օրգանական զառանցական խանգառում հաշիշի և ալկոհոլի չարաշահումով>> ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ կասկածյալ Վրեժ Գրիգորյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը և գործի վերջնական ընթացքը որոշելու համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-246-րդ և 248-րդ հոդվածներով,

որոշեցի

1. Վարույթումս քննվող թիվ 41160919 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> ՓԲԸ-ին:

2. Փորձագետներին պարզաբանման համար առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Վրեժ Գրիգորյանը որևէ քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակով /այսուհետ՝ հոգեկան հիվանդություն/ տառապու՞մ է, թե՞ ոչ, եթե այո, ապա, ինչպիսի՞ հոգեկան հիվանդությամբ և երբվանի՞ց:

բ/ Եթե Վրեժ Գրիգորյանը տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, ապա իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակ կամ դրանից հետո, հաշվի առնելով հոգեկան հիվանդության բնույթն ու աստիճանը, կարո՞ղ էր գիտակցել իր գործողության վտանգավորությունը և ղեկավարել դա, թե՞ ոչ

գ/ Վրեժ Գրիգորյանն իրեն մեղսագրվող արարքները կատարելու ժամանակահատվածում կամ դրանից հետո տառապել է այնպիսի հոգեկան խանգարմամբ, որի հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր գործողության փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը կամ ղեկավարել դա, թե՞ ոչ

դ/ Եթե Վրեժ Գրիգորյանը որևէ հիվանդությամբ կամ հոգեկան խանգարմամբ տառապում է, ապա հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ /իր կամ այլ անձանց համար վտանգ ներկայացնու՞մ է, թե՞ոչ/:

ե/ Վրեժ Գրիգորյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

4. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշմամբ չեն առաջադրվել, սակայն կարող են առաջանալ փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբուժական փորձագետների իրավասության մեջ, և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար:

5. Փորձագետներին պարզաբանել << քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքներն ու պարտականությունները և միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար << քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ Հ.Մելիք-Քարամյան